ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/181

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ

Թ. Հովեսյանի (լիազորագիր, տրված՝ 13.12.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20431-2019 գրությամբ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 03.12.2019թ. թիվ 01/61-25639 գրության հիման վրա, 09.12.2019թ. թիվ 26/26-1/20431-2019 գրությամբ նախաձեռնել է «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/181 ընթացակարգի շրջանակներում 13.12.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.12.2019թ. թիվ 01/61-25639 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարնի կողմից 07.10.2019թ. հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/201 ծածկագրով անվանաքարտի /բեյջ/ և արտահագուստի /բաճկոն/ գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 2-րդ, չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն:

Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո, 31.10.2019թ. վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել պայմանագիրը և պայմանագրի ապահովումը: Համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/181 ընթացակարգի շրջանակներում 13.12.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/181 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/181 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/201» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20431-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 03.12.2019թ. թիվ 01/61-25639 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/201» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.10.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությանը ներկայացվել էր ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/201 ծածկագրով արտահագուստի /բաճկոն/ ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 14.11.2019թ./ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, որը Ընկերության կողմից չի տրամադրվել:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված լիազորագիրը, արձանագրում եմ, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված լիազորագրում Ընթացակարգի «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/201» ծածկագրի փոխարեն նշվել է սխալ ծածկագիր՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-1/201»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման փուլում Ընկերության հայտը գնահատել է բավարար և վերջինիս ճանաչել ընտրված մասնակից, այն պայմաններում, երբ անձը, ով ստորագրել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/201» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով կազմված փաստաթղթերը տվյալ Ընթացակարգի շրջանակերում նման լիազորությամբ օժտված չէր:

Կարգի 41-րդ կետը սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ Ընկերության կողմից ներկայացված լիազորագրում անհապատասխանություն արձանագրվելու դեպքում (բացառությամբ գնային առաջարկ և հայտի ապահովում), Ընկերությանը պետք է տրամադրվեր մեկ աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունը շտկելու համար, ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է

արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Նման պայմաններում, հաշվի առնելով Ընկերության կողմից հայտով ներկայացված լիազորագրում առկա անհամապատասխանությունը, ինչպես նաև Կարգի 41-րդ և 42-րդ կետերով նախատեսված ընթացակարգերը, գտնում եմ, որ սույն ընթացակարգի շրջանակներում բավարար հիմքեր առկա չեն «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20431-2019 գրությամբ «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**